ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ (2000-2006 ԹԹ.)

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Հ. Բ.

Արցախի Հանրապետությունում սոցիալական պաշտպանվածության և կենսամակարդակի հարցերի ուսումնասիրությունն ունի գիտական նշանակություն, մանավանդ որ միջազգայնորեն չճանաչված հանրապետությունում այդ ուղղությամբ ձեռնարկվում են կարևոր միջոցառումներ: Հարցը էական է նաև հանրապետությունում թույլ տրված սխալների բացահայտման, տնտեսական ինտեգրացման, տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից: Արցախում սոցիալական պաշտպանվածության և կենսամակարդակի բարձրացման միջոցառումներն իրականացվում են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին» հռչակագրի (6.I.1992) և ԼՂՀ Սահմանադրության (10.XII.2006) սկզբունքներից ելնելով: Արցախում, որտեղ «Մարդու արժանապատվությունը հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»[1], բընակչության սոցիալական խնդիրները և կենսամակարդակի հարցերը թե՛ պետության և թե՛ հասարակության ուշադրության կենտրոնում են: Այսպես. Արցախում տեղի ունեցած նախավերջին՝ 1989 թ. մարդահամարով բնակչության թիվը կազմել է 186200 մարդ: Հետագայում՝ մեխանիկական տեղաշարժի հետևանքով, 2001 թ. հունվարի 1-ի դրությամբ այն իջել է 141509-ի[2]: Այդ ժամանակ հանրապետությունն ունեցել է 286 գյուղական բնակավայր և 10 քաղաք, 2004 թ. հունվարի 1-ի դրությամբ (հանրապետության տարածքը կազմել է 12041 կմ^3, բնակչությունը՝ 145.5 հազար մարդ[4]) կար 241 բնակավայր[5]: 1991 թ. հունվարի 1-ի դրությամբ մարզը ունեցել է 2 քաղաք, 5 շրջկենտրոն և 209 գյուղական բնակավայր[6]: Արդեն 2005 թ. մարդահամարի տվյալներով, ԼՂՀ տարածքը կազմել է 11.7 հազ. քառ. կմ[7]: Ըստ վիճակագրական տվյալների, հանրապետության բնակչության թիվը 1995 թ. 122.6 հազարից 2006 թ. հասել է 137.7 հազարի[8]:

Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու և նրա հետագա զարգացումն ապահովելու նպատակով 2000-2010 թթ.

---

[1] *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրություն, Ստեփանակերտ, 2007, էջ 7 (հոդված 17):*

[2] *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի ընթացիկ արխիվ (այսուհետև՝ ԼՂՀ ԱԺԸԱ) 2001 թ. հոկտեմբերի 1-ի նիստի սղագրություն, էջ 2:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Լեռնային Ղարաբաղը թվերով, Ստեփանակերտ, 2004, էջ 11 և 12:*

[5] *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք. 2000-2006 (այսուհետև՝ ԼՂՀ վիճակագրական տարեգիրք), Ստեփանակերտ, 2007, էջ 3:*

[6] *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ, ֆ. 254, ց. 5, գ. 7, թ. 1:*

[7] *ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, էջ 5:*

[8] *Նույն տեղում, էջ 12 և 13:*

համար կազմվել է բարեփոխումների ծրագիր, որը հաստատվել է Ազգային ժողովում և դրվել գործողության մեջ: Դրա համաձայն, նախատեսվում էր հանրապետության բնակչության տարեկան 30-35% աճ: Արդեն 2003 թ. արձանագրվեց 41.5% աճ, որն աննախադեպ ցուցանիշ էր: Իսկ 2004 թ. այն կազմել է 44.8%, 2005-2006 թթ.՝ 40-41%, այսինքն՝ մոտ 3 մլդ դրամի աճ նախորդ տարվա համեմատ: 2006 թ. հանրապետության բյուջեում սեփական եկամուտները 1999-2000 թթ. համեմատ եղել են 20 անգամ ավելի[9]: Սա լուրջ առաջընթաց էր հանրապետությունում:

2000 թ. հանրապետության կենսաթոշակային պարտքը հասնում էր 830-840 մլն դրամի, իսկ աշխատավարձինը՝ 400 մլն-ի: Կային նաև սոցիալական բնույթի այլ պարտքեր: Դրանք մարելու համար նախ և առաջ անհրաժեշտ էր հանրապետության տնտեսությունը դնել կայուն հիմքի վրա: Սոցիալական և կենսամակարդակային հարցերին լուծում տալու համար, պետական բյուջետային ծախսերից բացի, կարևոր տեղ ունի նաև մասնավոր ներդրումը: Առանձնապես պետք է ընդգծել Հայաստանի Հանրապետության դերը: Այդ ներդրումների շնորհիվ 1999 թ. փետրվարի դրությամբ Արցախում վերականգնվել է 3300 բնակարան: Հայաստանի և սփյուռքի օգնությամբ վերականգնվեցին բազմաթիվ ավերված բնակավայրեր: Արժանին պետք է հատուցել Էռնեկյան եղբայրներին, արքեպիսկոպոս Մ. Աշճյանին, «Հայաստան» համահայկական հիմնադրամին, որոնց աջակցությամբ և նյութական օժանդակությամբ վեր էին հառնում լիովին ավերված՝ Ասկերանի շրջանի Խրամորթ, Մարտակերտի շրջանի Թալիշ, Վաղուհաս գյուղերն ու մյուս բնակավայրերը: Հետպատերազմյան տարիներին Ստեփանակերտում, Բոստոնի «Հայ առողջարարական միության» հովանու ներքո գործող մոր և մանկան «Արփեն» կենտրոնը նյութական օգնություն էր ցույց տալիս հղի կանանց: Մինչև 2002 թ. սկիզբը կենտրոնի ծառայությունից օգտվել է ավելի քան 7000 կին: Կենտրոնը, համագործակցելով ԼՂՀ սոցապ նախարարության հետ, օգնում է նաև բազմազավակ ընտանիքներին և հաշմանդամներին[10]:

Անգլիայի լորդերի պալատի փոխխոսնակ Քերոլայն Քոքսի աջակցությամբ պատերազմի հաշմանդամ ազատամարտիկների համար Ստեփանակերտում կառուցվում է «ՀԱՆՍ» կլինիկան: Ընդհանրապես՝ ԼՂՀ-ում առաջնահերթ օգնություն է ցուցաբերվում կարիքավորներին և սահմանային գոտում ապրողներին[11]: Նշենք, որ Արցախում մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքով ԼՂՀ-ն ավելի քան երկու անգամ զիջում է ՀՀ-ին:

Աղքատության հաղթահարումը կապված է կայուն տնտեսական աճի, հարկային եկամուտների ավելացման, ստվերայնության կրճատման, բնակչության սոցիալական պաշտպանվածության հարցերի հետ: Այդ ամենը, անկասկած, Արցախի իշխանությունների ուշա-

---

[9] *Ազատ Արցախ, N 8, 28.VII.2005, Հայաստանի Հանրապետություն, N 17, 2.II.2005:*

[10] *Հայաստանի Հանրապետություն, N 1, 10.I.2002:*

[11] *Նույն տեղում, N 32, 13.II.1999:*

դրության կենտրոնում է: Արցախում ամենաբարձր տնտեսական աճի տեմպը արձանագրվել է 2003 թ.: Այդ ժամանակ ՀՆԱ-ի իրական աճի տեմպը կազմել է 19.8% (ամենացածրը եղել է 2001 թ.՝ 2.4%)[12]: 2000-2006 թթ. հանրապետության բնակչության կենսամակարդակը բարելավելու և սոցիալական ոլորտը կարգավորելու համար ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ: Այսպես, նըպաստառու մեկ ընտանիքի հաշվով, 2000 թ. 4327 դրամից 2006 թ. նպաստը բարձրացել է 8351-ի[13], միջին ամսական աշխատավարձը 2000 թ. 27222 դրամից 2006 թ. հասել է 56700-ի[14]: Նաև աշխատանքներ են տարվել կենսաթոշակների հարցը կարգավորելու համար: Հանրապետությունում տարեցտարի ավելանում են նաև սոցիալական վճարումներն ու կենսաթոշակները: Կենսաթոշակները կարգավորելու հարցում կարևոր դեր է խաղացել 2003 թ. նոյեմբերին ընդունված «ԼՂՀ պետական կենսաթոշակների մասին» օրենքը[15]: Ամսական կենսաթոշակի միջին չափը 2000 թ. 7358 դրամից արդեն հասել է 14359-ի[16]: Այդ նույն ժամանակաշրջանում բուհերի ուսանողների կրթաթոշակների նվազագույն չափը յոթ տարում մնացել է նույնը՝ 5000 դրամ, 3970 դրամ՝ միջնակարգ մասնագիտական հաստատությունների սովորողների համար[17]:

Արցախում բնակչության առողջապահության հարցը գտնվում է ոչ պատշաճ մակարդակի վրա, մանավանդ գյուղերում: Այդ բացը գալիս է 90-ական թվականներից և նույնիսկ խորհրդային իշխանության տարիներից: Հետագայում՝ 2000-2006 թթ., տեղաշարժը աննկատ է եղել: Օրինակ. 2000 թ. բոլոր մասնագիտությունների գծով բժիշկների քանակը 261 էր, 2001-ին՝ 273, 2002-ին՝ 276, 2003-ին՝ 282, 2004-ին՝ 283, 2005-ին՝ 285 և 2006-ին՝ 297. յոթ տարում բժիշկների թիվն աճել է ընդամենը 36-ով: Այդ նույն ժամանակաշրջանում միջին բժշկական անձնակազմի քանակը 723-ից հասել էր 948-ի, իսկ հանրապետությունում հիվանդանոցային հիմնարկների թիվը՝ 17-ից 21-ի: Հիվանդանոցային մահճակալների թիվը 720-ից իջել է 655-ի: Կանանց կոնսուլտացիաների, մանկական պոլիկլինիկաների և ինքնուրույն բուժարանների թիվը 36-ից բարձրացել է 39-ի, հղի կանանց և ծննդկանների համար մահճակալների թիվը 90-ից հասել է 100-ի: Մանկական հիվանդանոցներում մահճակալների թիվը 110-ից իջել է 100-ի[18]: Մի շարք հիվանդությունների գծով մասնագետ-բժիշկների խիստ կարիք կա: Հանրապետությունում չկա բուժական ֆիզկուլտուրայի և մարզական որևէ բժիշկ: Եթե 2000 թ. 10000 բնակչի հաշվով կար 19.4 բժիշկ, ապա 2006-ին այդ թիվը հասել է 21.6-ի: Միջին բժշկական անձնակազմը նույն ժամանակա-

---

[12] **Դեմո,** *N 2, 31.III.2004:*
[13] *ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, էջ 40, 41:*
[14] *Նույն տեղում, էջ 37:*
[15] *Հայաստանի Հանրապետություն, N 109, 11.VI.2005:*
[16] *ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, էջ 34:*
[17] *Նույն տեղում:*
[18] *Նույն տեղում, էջ 59 և 60:*

շրջանում 53.8-ից հասել էր 68.8-ի[19]: Գյուղական վայրերում չկան բժիշկներ, դեղամիջոցներ, բուժկետերը ապահովված չեն որակյալ կադրերով: Դա նույնպես գյուղացիների արտահոսքի պատճառներից է[20]:

Հանրապետությունում մեկ շնչի հաշվով կատարվող առողջապահական ծախսերը ևս ցածր են: Օրինակ. 2004 թ. 7100 դրամից 2005-ին այն հասել է 9894-ի: 2000 թ. առողջապահության գծով բյուջետային ծախսերը կազմել են ընդամենը 664.9 մլն դրամ: Այն 2006-ին բարձրացել է 1486.0 մլն դրամի[21]: 2006 թ. մեկ շնչի հաշվով ծախսը կազմել է 11491 դրամ: Նախկինում մինչև 3 տարեկան երեխաներն էին անվճար օգտվում բուժծառայությունից: 2006 թ. սկսած՝ մինչև 7 տարեկան երեխաները ստանում են անվճար դեղորայք: Եթե 2005 թ. հանրապետության յուրաքանչյուր բնակիչ տարեկան կարող էր 300 դրամի անվճար դեղորայք ստանալ, ապա 2006-ին՝ 400-ի: Բժշկի միջին աշխատավարձը 2006-ին կազմել է 51 հազար դրամ, իսկ միջին բուժաշխատողինը՝ 32 հազար[22]:

Արցախի կառավարությունը 2000-2006 թթ. մի շարք միջոցառումներ է ձեռնարկել կրթությունն ու մշակույթը հանրապետությունում զարգացնելու ուղղությամբ: 2000/01 ուսումնական տարում հանրապետությունում կային 212 հանրակրթական դպրոց՝ 23468 սովորողներով: 2006/07-ում դրանք արդեն 238-ն էին, որոնցում սովորողների թիվը կազմել է 21880, այսինքն, 2000/01-ից 1588-ով պակաս: Միջնակարգ մասնագիտական ուսումնական 4 հաստատություններում սովորողների թիվը կազմել է 1366[23], որը նույնպես ցածրը էր 2000/01-ի 1410 սովորողների թվից: 2000/01 ուս.տարում հանրապետությունում կային 7 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 2006/07-ին ավելացել է ևս մեկը: Բուհերում սովորողների թիվը 3811-ից հասել է 6967-ի[24]:

2000-2006 թթ. շոշափելի արդյունքեր կային մանավանդ մշակույթի բնագավառում: 2006 թ. հանրապետությունում գործում էին 9 թանգարան, 9 գրադարան և 4 թատրոն: Կրթության և գիտության գծով պետական բյուջեից կատարված ծախսերը 2000 թ. 1802.7 մլն դրամից 2006-ին հասել է 3908.3 մլն-ի, մշակույթի, տեղեկատվության, մարզական և կրոնի գծով՝ 432.6 մլն-ից 860.3 մլն-ի, իսկ սոցիալական ապահովության ծախսերը՝ 3454.0 մլն-ից 5159.1 մլն-ի[25]:

1990-ական թթ. երկրորդ կեսին և հետագա տարիներին հանրապետությունում էական խնդիր էին գործազրկության դեմ պայքարը և նոր աշխատատեղերի բացումը: Պատերազմից վերադարձած ազատամարտիկների մեծ մասը մնացել էր անգործ: Այդ պատճա-

---

[19] *Նույն տեղում, էջ 70 և 71:*

[20] *ԼՂՀ ԱԺԸԱ, 4-րդ գումարման 2-րդ նստաշրջան, 15.II.2006, աղագրություն, էջ 9-10:*

[21] *ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, էջ 168:*

[22] *Հայաստանի Հանրապետություն, N 28, 16.II.2006:*

[23] *ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, էջ 45:*

[24] *Նույն տեղում, էջ 46:*

[25] *Նույն տեղում, էջ 168:*

ռով հարյուրավոր ընտանիքներ լքեցին հայրենի վայրերը և հայտնըվեցին Հայաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսում և այլ երկրներում: Հանրապետությունում աշխատանքային ռեսուրսները 2000 թ. կազմել են 73793 մարդ, իսկ 2006-ին՝ 81298, ըստ որում, տնտեսապես գործուն բնակչությունը 2000 թ. 51335-ից 2006-ին հասել է 58159-ի[26]: Դրանցից վարձու աշխատողները 2000-ին կազմել են 28990 մարդ, 2006-ին՝ 39515: 2000 թ. հանրապետությունում պաշտոնապես գրանցված է եղել 3541 գործա- զուրկ, 2006-ին՝ 3560: Տնտեսապես ոչ գործուն բնակչության թի- վը 22458-ից հասել է 23139-ի[27]: Եթե 2000 թ. հանրապետությու-նում տնտեսապես գործուն բնակչությունը կազմել է ընդհանուրի 69.6%-ը, 2006-ին այն հասել է 71.5%-ի, վարձու աշխատողները 39.3%-ից հասել են 48.6-ի[28]: Ինչպես երևում է, աշխատունակ բնակ- չության զգալի մասը իրականում գործազուրկ էր, որը խիստ բացասական հետևանք է թողնում սոցիալական և կենսամակարդակի հարցերի վրա: Արցախում գործազուրկների մեծ մասը կանայք են, 2000 թ. պաշտոնապես գրանցված գործազուրկ տղամարդկանց թիվը կազմել է 134, իսկ 2006-ին՝ 319: Կանանց թիվը 3407-ից իջել է 3241-ի, որոնցից 1615-ը 18-30 տարեկան երիտասարդներ էին[29]: Ահա թե ինչու հանրապե- տությունից, մանավանդ գյուղական վայրերից արտագաղթողների մեծ մասը հիմնականում երիտասարդներ էին: Ըստ վիճակագրության, 2000-2006 թթ. մեկնել է 6468 մարդ[30]:

Գյուղական վայրերում աշխատողների միջին տարեկան թվաքանակը 2000 թ. կազմել է 22055 մարդ: Այն 2006-ին իջել է 19115-ի[31]: Երիտասարդները գյուղերից հեռանում են աշխատանք չունենալու պատճառով: Իսկ դա ասես չի անհանգստացնում ոչ գյուղական համայնքներին և ոչ էլ հանրապետության իշխանություններին: 1995 թ. հանրապետության բնակչության 51.1%-ը բնակվում էր քաղաքներում, իսկ 48.9 տոկոսը՝ գյուղերում: 2000 թ. այն կազմել է 68.4% և 41.6%, իսկ 2006-ին՝ 51.4% և 48.6%: Գյուղական վայրերում բնակչության թիվը 1995-ին 55.1 հազարից 2000-ին հասել է 66 հազարի, իսկ 2006-ին՝ 66.9 հազարի: Ասել է, թե՝ 7 տարում հանրապետության գյուղական բնակչության թիվը աճել է ընդամենը 900-ով: Մինչդեռ այդ տարիներին գյուղերում ծնվել է 6862 երեխա[32]: 2000-2006 թթ. հանրապետության գյուղական վայրերում բընակչության բնական աճը 2437 էր, իսկ քաղաքներում՝ 4005: Հանրապետությունում 7 տարում բնակչության մեխանիկական աճը կազմել է 5600 մարդ, որից 2000-ին՝ 2144, 2001-ին՝ 1559, մնացածը՝ մյուս 5 տարիներին: 2000-2006 թթ. Արցախ է եկել 12454, մեկնել է

---

[26] *Նույն տեղում, էջ 21:*
[27] *Նույն տեղում, էջ 21:*
[28] *Նույն տեղում, էջ 22:*
[29] *Նույն տեղում, էջ 23:*
[30] *Նույն տեղում, էջ 18:*
[31] *Նույն տեղում, էջ 24:*
[32] *Նույն տեղում, էջ 12-13 և 16:*

6468 մարդ[33]: Դա բացատրվում է բնակչության սոցիալական պայմանների ցածր մակարդակով: Սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավման համար ամենահրատապը նոր աշխատատեղերի բացումն էր և բնակչության արտահոսքի կանխումը: Իսկ դա հնարավոր էր կապիտալ ծախսերի և անհատական ներդրումների հաշվին: Քանի որ ավերված ձեռնարկությունների վերականգնումը պահանջում էր ֆինանսական մեծ միջոցներ, ուստի նպաակահարմար էր կառուցել նորերը: 2001-2005 թթ. շինարարության բնագավառում բացվել է 4000 աշխատատեղ: 2006-ին ավելացել է 500-ը: 2000 թ. սկսած՝ հանրապետությունում կառուցվել են մի քանի արդյունաբերական ձեռնարկություններ: Օրինակ՝ Ստեփանակերտի ալրաղացում բացվեց 69 աշխատատեղ, նորաբաց կաբելի գործարանում՝ 60, այդքան էլ՝ Շուշիի ոսկերչականում: Փայտի վերամշակման ժամանակակից սարքավորումներով հագեցված գործարանում բացվեց 120 աշխատատեղ[34]: Դրմբոնի «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ում, որն արդյունահանում է ոսկի և պղինձ, բացվեց ավելի քան 1000 աշխատատեղ: Աշխատատեղեր բացվեցին նաև վերականգնված Ստեփանակերտի, Ասկերանի, Կարմիր շուկայի և Մարտունու գինու գործարաններում, շինանյութերի և սննդամթերքի արտադրության ձեռնարկություններում:

Մոտավոր հաշվումներով 2000-2006 թթ. հանրապետությունում բացվել է 8-9 հազար աշխատատեղ: Այդ հանգամանքը նկատելիորեն նվազեցրեց բնակչության արտագաղթը: Արցախի իշխանությունները փորձում են ներգրավել ավելի շատ ներդրողների, իսկ ներդրումների ոլորտը ներառում է արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, էներգետիկան, կապը, շինարարությունը, առողջապահությունը, մշակույթը, կրթությունը, զբոսաշրջությունը և այլ ճյուղեր: Միայն 2000-2002 թթ.՝ 2.5 տարում, Արցախում 30 մլն դոլարի չափով օտարերկրյա ներդրումներ են կատարվել:

Արցախն ունի հարուստ բնաշխարհ, նաև ոսկի, արծաթ, կիսաթանկարժեք մետաղներ, պղինձ, հանքային ջրեր, զբոսաշրջության համար՝ լայն հնարավորություններ: Ձեռներեցներին և ներդրողներին շահագրգռելու, նոր ձեռնարկություններ բացելու և բնակչությանն աշխատատեղերով ապահովելու համար կառավարությունը փորձում է ճկուն հարկային քաղաքականություն վարել: Բավական իջեցվել են հարկաչափերը: Դա գրավեց մի շարք ներդրողների: Օրինակ. Ավստրալիայի ներդրողների հաշվին Ստեփանակերտում կառուցվեց «Նաիրի» հյուրանոցը, իսկ «Ղարաբաղ» հյուրանոցի վերականգնման ծախսերը փակվեցին ամերիկա-շվեյցարական կապիտալով և բացվեցին տասնյակ աշխատատեղեր[35]: «Արցախբանկի» վարկավորմամբ սկսեցին տեղական հումքով աշխատել մսի կոմբինատը, ալրաղացները, կազմակերպվեց բարձրորակ սպիրտային խը-

---

[33] *Նույն տեղում, էջ 18:*

[34] *Հայաստանի Հանրապետություն, N 148, 18.VIII.2000:*

[35] *Նույն տեղում, N 204, 13.XI.2002:*

միջքների արտադրություն՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

Արցախյան պատերազմի տարիներին 40-60 հազար մարդ ստիպված էր հեռանալ հայրենի օջախներից, նրանց մեծ մասը հետագայում վերադարձավ: Սկսած 1994 թ.՝ հանրապետությունում իրագործվում է «Վերադարձ Արցախ» ծրագիրը: ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությունը, որը զբաղվում է վերաբնակեցման հարցերով, Արցախին սկսել է աջակցել 2000 թվականից: ԼՂՀ կառավարության որոշմամբ, 2002 թ. նոյեմբերին կառավարությանն առընթեր միգրացիայի, փախստականների և վերաբնակեցման վարչություն ստեղծվեց նաև Արցախում, որը ծրագրեց միայն 2002 թ. Հայաստանից Արցախ տեղափոխել մոտ 100 ընտանիք, որոնցից 30-ը՝ ծննդով արցախցի: 2003 թ. պետական բյուջեով նախատեսված վերաբնակեցման ու վերաբնակիչների արտոնությունների վճարման ծախսերը փակելու համար հատկացվել է 440000 դրամ[36]: Արցախի կառավարության որոշմամբ, վերաբնակիչներին հատկացվում է բնակարան, հողամաս, 200 հազար դրամ վարկ (20 տարով և 0.5% տոկոսադրույքով)՝ անասուններ գնելու համար: Վերաբնակչի ընտանիքի գլխավորին տրվում է 20 հազար դրամ, իսկ յուրաքանչյուր անդամին՝ 5000-ական: Վերաբնակեցված ընտանիքը 5 տարի ազատվում է բոլոր տեսակի հարկերից[37]: Կառավարության որոշումով, Ստեփանակերտում բնակվող վերաբնակչին տրվում է բնակարան, միանվագ դրամական օգնություն, հատուցվում է ճանապարհածախսը, նա 5 տարի ժամկետով ազատվում է կոմունալ ծառայությունների վարձից: Տրվում են նաև այլ արտոնություններ[38]:

Վերաբնակեցումը ԼՂՀ հիմնահարցի կարգավորման համար ռազմավարական նշանակություն ունի: Հետևապես՝ վերաբնակեցվածների սոցիալական պայմանները և կենսամակարդակը պետք է բարձր հիմքերի վրա լինեն, նրանք ամենից առաջ պիտի ապահովվեն բնակարաններով, աշխատատեղերով, բավարար կենցաղային պայմաններով: Այլապես՝ վերաբնակեցումը հաջողություն չի ունենա: Միայն 2003 թ. Հայաստանից և ԱՊՀ մյուս երկրներից ընդունվել և տեղավորվել է 135 ընտանիք՝ 513 հոգի, որոնց համար կառուցվել է 96 առանձնատուն, ութ միջնակարգ դպրոց, վերականգնվել է 4 նոր բնակավայր: Վերաբնակեցվածների համար բնակարաններ կառուցող «Շեն» բարեգործական կազմակերպությունն իր գործունեությունը Արցախում սկսել է դեռևս 1988 թ., որի վերջին խոշոր ծրագրերից է Արցախի, մանավանդ վերաբնակեցված գյուղերի դպրոցներին 400-ից ավելի համակարգիչների տրամադրումը[39]: Ըստ Շենի ծրագրերից մեկի՝ Մարտակերտի և Շահումյանի շրջաններում պետք է վերաբնակեցվի 200 ընտանիք (700 հոգի), բացվի 200 ագրարային

---

[36] *Նույն տեղում, N 120, 15.IV.2003:*

[37] *Նույն տեղում, N 30, 20.II.2002:*

[38] *ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ (այսուհետև՝ ԼՂՀ ԿՀԱ), որոշում N 121, 15.IV.2003:*

[39] *Ազատ Արցախ, N 118, 5.X.2006,*

աշխատատեղ, հողատարածքների ցանքսը ավելացվի 456 հեկտարով[40]:

Արցախի Հանրապետության բնակչության սոցիալական պայմանների բարելավմանը նպաստում են կառավարության ձեռնարկած նաև այլ միջոցառումներ՝ օգնություն է ցույց տրվում փոքր և միջին ձեռնարկություններին, միանվագ նպաստ թոշակառուներին, բազմազավակ ընտանիքներին, բնական աղետներից տուժած հողատերերին, կարիքավոր ընտանիքներին, հաշմանդամներին և այլն:

Արցախի կառավարությունը միջոցներ է ձեռնարկում նաև ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքների կենսամակարդակի բարձրացման հարցերով: Այդ մասին է վկայում կառավարության հատուկ որոշումը (2004 թ.)[41]: 2004 թ. ընդունված՝ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» և «Զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ԼՂՀ օրենքով դրամական փոխհատուցում սահմանվեց նրանց համար[42]: Զոհված զինծառայողների ընտանիքների անդամների, հաշմանդամների, կենսաթոշակառուների և աշխատող քաղաքացիների առողջարանային բուժումը կազմակերպելու համար որոշվեց ուղեգրերը հատկացնել անվճար[43]:

Որպես կանոն, կառավարությունը օգնություն է ցուցաբերում նաև բնական աղետներից տուժած տնտեսություններին: 2004 թ. նրբանց հատկացվել է 126.0, 2005-ին՝ 144.0, 2006-ին՝ 381 մլն դրամ[44]:

2006 թ. հունվարի 24-ին ԼՂՀ կառավարության որոշումով ստեղծվեց Արցախի գյուղերի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ՝ գյուղատնտեսության բնագավառում Հայաստանում և սփյուռքում ձեռք բերված գիտական հետազոտությունների արդյունքները կիրառելու, տարբեր ծրագրեր իրագործելու, գյուղական անապահով ընտանիքներին աջակցելու, ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով[45]:

2006 թ. կառավարությունը 226 մլն դրամով գնեց 700 տ սերմացու և 300 տ հանքային պարարտանյութ ու բաժանեց բնական աղետներից, հրդեհներից տուժած գյուղացիներին՝ մասնակի փոխհատուցման կարգով[46]:

2001-2006 թթ. հանրապետությունում գազիֆիկացվել է 53 բնակավայր, որոնցից 49-ը՝ գյուղական: Եթե 2000 թ. հանրապետությու-

---

[40] ԼՂՀ ԱԺԸԱ, 2003 թ. դեկտեմբերի 24-ի նիստի սղագրություն, 3-րդ գումարման 4-րդ նստաշրջան, 2002 թ. մարտի 28-ի նիստի սղագրություն, ԼՂՀ ԿԸԱ, որոշում N 1841, 11.I.2003, տե՛ս կառավարության՝ 2002 թ. N 8, N 204, 2003 թ. N 48, N 157, 2004 թ. N 145, N 303, N 445, 2005 թ. N 140 և 2006 թ. N 100 որոշումները, ԼՂՀ ԿԸԱ, որոշում N 35, 21.III.2000, նույն տեղում, որոշում N 35, 23.IV.2002:

[41] Նույն տեղում, որոշում N 316, 17.X.2004:

[42] Նույն տեղում, որոշում N 221, 30.VII.2004:

[43] Նույն տեղում, որոշում N 216, 26.V.2004:

[44] ԼՂՀ ԿԸԱ, որոշում N 452, 17.XI.2004, որոշում N 381, 12.IX.2005, որոշում N 450, 01.IX.2006:

[45] Նույն տեղում, որոշում N 39, 24.I.2006:

[46] ԼՂՀ ԱԺԸԱ, 3-րդ գումարման 9-րդ նստաշրջանի սղագրություն, 24.XI.2004:

նում գազիֆիկացվել էր 9852 բնակարան, ապա 2006-ին՝ 18382 (14145-ը՝ քաղաքներում, իսկ 4207-ը՝ գյուղերում[47]): Մարտունու և մյուս շրջանների տասնյակ գյուղական բնակավայրեր դեռևս չեն գազիֆիկացվել[48]:

Արժեզրկված ավանդների փոխհատուցման հարցը ևս արժանացավ իշխանության ուշադրությանը[49]: Կառավարության 2002 թ. նոյեմբերի 26-ի որոշումով[50] 2003 թ. առաջին կիսամյակում նորածին 260 երեխայի անվամբ բացվել էին նպատակային ժամկետային ավանդներ: Ծնված երրորդ երեխայից սկսած՝ նրանց անվամբ փոխանցվում են գումարներ: Այսպես, 2003 թ. առաջին կիսամյակում գումար է հատկացվել 258 ընտանիքի 1429 երեխայի: Յոթ երեխա ունեցող 14 ընտանիքի համար կառուցվել են բնակարաններ: 2000 թ. 184 երեխա ստացել են 538400 դրամ, 2001-ին՝ 384 երեխա՝ 1 մլն 445200, իսկ 2002-ին՝ 566 երեխա՝ 2 մլն 192 հազար դրամ[51]:

Մայրաքաղաք Ստեփանակերտի բնակչության ջրամատակարարման հարցը խորհրդային ժամանակաշրջանում ևս քննարկման առարկա էր: Անկախության տարիներին մշակվեցին լավագույն ծրագրեր: Սակայն դրանք իրագործելու համար պահանջվում են ֆինանսական մեծ ռեսուրսներ: Այնուամենայնիվ՝ նախատեսվեց կապիտալ շինարարության հաշվին կառուցել 3.5 մլն խմ տարողությամբ ջրամբար, որը թույլ կտա մայրաքաղաքի բնակչությանը շուրջօրյա ջրամատակարարում ապահովել:

Հրատապ խնդիրներից է նաև բնակարանաշինության հարցը: 2000 թ. Արցախում կար 36653 բնակարան: Այդ թիվը 2006-ին հասել է 40480-ի, կամ 7 տարում այն ավելացել է 3827-ով[52]: Սակայն հանրապետությունում հարյուրավոր ընտանիքներ դեռևս մնում են առանց բնակարանի: Պետական բյուջեի և մարդասիրական օգնության ծրագրերով, զոհված ազատամարտիկների և հաշմանդամ ընտանիքների համար Ստեփանակերտում կառուցվեց 50 բնակարանով նոր շենք: Նոր բնակարաններ են կառուցվել նաև զինծառայողների համար: 2000-2006 թթ. բնակարանային շինարարության նպատակով ծախսվել է 8439.4 մլն դրամ և գործարկվել 98.7 հազար մ^2 ընդհանուր մակերես[53]: Այդուհանդերձ, բնակարանային շինարարությունը հետ է մնում մանավանդ գյուղական վայրերում:

Այսպիսով, չնայած բազում դժվարություններին, 2000-2006 թթ. Արցախի իշխանությունները քայլեր են ձեռնարկել հանրապետության բնակչության սոցիալական և կենսամակարդակի հարցերը դրականորեն լուծելու համար:

---

[47] *ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, էջ 83 և 84:*

[48] *ԼՂՀ ԱԺԸԱ, 4-րդ գումարման 3-րդ նստաշրջանի արագրություն, 15.XI.2006:*

[49] *ԼՂՀ ԿԸԱ, որոշում N 195, 1.VIII.2002:*

[50] *ԼՂՀ ԿԸԱ, որոշում N 62, 26. XI. 2002:*

[51] *Ազատ Արցախ, N 83, 17.VII.2003:*

[52] *ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, էջ 81:*

[53] *Նույն տեղում, էջ 140-141:*

ВОПРОСЫ СОЦИАЛЬНОЙ ЗАЩИТЫ НАСЕЛЕНИЯ АРЦАХА (2000-2006 ГГ.)

АБРААМЯН Г. Б.

Резюме

В годы Арцахской войны почти полностью была разрушена экономика республики, что отрицательно сказалось на социальном и жизненном уровне населения. В этой связи Арцахским правительством в 2000-2006 гг. были предприняты меры, направленные на увеличение пенсий, открытие новых рабочих мест, на развитие культурно-образовательной сферы, а также решение других жизненно важных социальных вопросов. Посильную помощь Арцаху оказывают Республика Армения и зарубежная армянская диаспора.